Արձանագրություն N 2

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2023/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդովՀայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ուղևորափոխադրման մասնագիտացված ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21 նոյեմբերի 2023թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Մանուկյանը անդամներ՝ Գագիկ Երեղյանը, Վարդ Խաչատրյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2023/2 ծածկագրով գնման ընթացակարգի հատերի բացման, գնահատման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2023/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Արթուր Մանուկյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները

Հ/Հ	Մասնակցի անվանումը, հասցեն	(ԱԱՀ վճարող) կամ (ԱԱՀ չվճարող)	Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ	Պլանավորված գին /ՀՀ դրամ /
1	**Վագտրանս ՍՊԸ**	(ԱԱՀ վճարող)	19140800	22969020
	ԲԱՍԼԵՆԴ ՍՊԸ	(ԱԱՀ չվճարող)	22969000	
	ԷԼԻՏԲԱՍ ՍՊԸ	(ԱԱՀ չվճարող)	22969020	
	ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ	(ԱԱՀ վճարող)	39000000	
2	**ԲԱՍԼԵՆԴ ՍՊԸ**	(ԱԱՀ չվճարող)	16155810	16155810
	Վագտրանս ՍՊԸ	(ԱԱՀ վճարող)	13463180	
	ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ	(ԱԱՀ վճարող)	39000000	
3	**ԲՈՒՍ ՎՈՅԱԺ ՍՊԸ**	(ԱԱՀ չվճարող)	11859800	11859900
	Վագտրանս ՍՊԸ	(ԱԱՀ վճարող)	9883260	
	ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ	(ԱԱՀ վճարող)	39000000	

Հանձնաժողովի նախագահ Արթուր Մանուկյանը ներկայացրեց, որ 20.11.2023թ. ստացվել է Վագտրանս ՍՊԸ-ի տնօրեն Գ.Հովհաննիսյանի գրությունը առ այն, որ իրենց ընկերությունը ԱԱՀ վճարող չէ, սակայն ընթացակարգի հայտ ներկայացնելիս սխալմամբ գնային առաջարկը ներկայացվել է ԱԱՀ-ով: Նույնաբովանդակ գրություն է ստացվել նաև ընթացակարգի մասնակից ԷԼԻՏԲԱՍ ՍՊԸ-ի տնօրեն Գ.Նիկողոսյանից, որ ՀՀ հարկային օրենսդրության համաձայն ուղևորափոխադրման ծառայությունների մատուցումը չի հանդիսանում ԱԱՀ-ով հարկման ենթակա ծառայություն, և սույն ընթացակարգի 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Վագտրանս ՍՊԸ-ն և ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ-ն գնային առաջարկները ներկայացրել են ԱԱՀ-ով:

Հաշվի առնելով ստացված տեղեկատվությունը՝ ընթացակարգի հետագա ընթացքը որոշելու նպատակով հանձնաժողովը որոշեց.

-Ընթացակարգը կասեցնել. Ընթացակարգի 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Վագտրանս ՍՊԸ-ի ԱԱՀ վճարող կամ չվճարող հանդիսանալու հանգամանքը պարզելու համար հարցում կատարել հարկային մարմնին: Ստացված տեղեկությունը հաստատվելու դեպքում դիմել ՀՀ ֆինանսների նախախարարություն՝ հետագա ընթացքը որոշելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ		Արթուր Մանուկյան
անդամներ		Գագիկ Երեղյան
		Վարդ Խաչատրյան
քարտուղար		Սպարտակ Հարությունյան